

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԱՂՎԱՆԻ

ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ. 00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»
(անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ. դոկտոր **Ի. Կ. Կարապետյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բան. գիտ. դոկտոր **Ա. Ա. Միմոնյան**

մանկ. գիտ. թեկնածու **Կ. Կ. Կարապետյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական

լեզվահասարակագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հունիսի 26-ին, ժամը 14⁰⁰-ին, ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք.Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մայիսի 25-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական

խորհրդի գիտական քարտուղար՝

մանկ. գիտ.թեկնածու, դոցենտ՝

Ա. Փ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Իրավական ոլորտի բարեփոխումները կարևոր պայման են ցանկացած երկրի կրթական, տնտեսական, արդյունաբերական, մշակութային զարգացման համար: Ոչ մի երկիր չի կարող իրականացնել բարեփոխումներ իրավական ոլորտում առանց հաշվի առնելու ամբողջ աշխարհում կուտակված դրական փորձը: Անգլերենն այդ առումով շահեկան վիճակում է, քանի որ ոչ միայն անգլալեզու, այլև այլ լեզուներով հաղորդակցվող երկրների իրավական մտքի զարգացման մասին կարելի է ճիշտ և ամբողջական պատկերացում կազմել, ուսումնասիրելով համապատասխան անգլալեզու իրավաբանական գրականություն:

Հայալեզու իրավաբաններն ունենալով շատ դեպքերում բավականին լավ լեզվական կարողություններ, չեն կարողանում հավուր պատշաճի հաղորդակցվել իրենց անգլալեզու գործընկերների հետ, հատկապես՝ մասնագիտական մակարդակում:

Ակնհայտ է, որ պահանջվող մակարդակում հաղորդակցվելու համար անհրաժեշտ է ոչ միայն օտար լեզվի, այլև այդ լեզվով հաղորդակցվողների մշակույթի իմացություն: Մասնագիտական մակարդակում խնդիր է դրվում յուրացնել ոչ միայն անգլալեզու իրավաբանների լեզուն և մշակույթը, այլև նրանց մասնագիտական շփման մշակույթը:

ՀՀ-ում անգլերեն իրավաբանական ենթալեզվի ուսուցմանը նվիրված մեթոդական աշխատանքներ դեռևս չեն իրականացվել, հատկապես, երբ խոսք է գնում միջմշակութային հաղորդակցական հմտությունների զարգացման մասին:

Վերջին տարիներին հրապարակ են իջել արժեքավոր հետազոտություններ, նվիրված մասնագիտական և մասնագիտական կողմնորոշման անգլերենի տեքստի, խոսույթի, բառապաշարի ընտրության և ուսուցման հիմնախնդիրներին: Կարելի է առանձնացնել Ս.Պ.Ասատրյանի (2006), Ռ.Ս.Պետրոսյանի (2006), Ն.Վ.Պողոսյանի (2010), Ա.Մ.Մանուկյանի, Ա.Լ.Ղուկասյանի (2011) և այլոց աշխատանքները:

Միջմշակութային և հանրալեզվական իրազեկության զարգացման տեսանկյունից կարևորվում են Լ.Ռ. Սանոյանի (2012), Ռ.Ռ. Խաչատրյանի (2011), Բ.Կ.Կարապետյանի, Մ.Օ.Գյոդակյանի (2008), Բ.Մ.Եսաջանյանի (2007), ինչպես նաև Մ. Հ.. Ապրեսյանի (2010), Ն.Կ.Հարությունյանի, Մ.Ս.Բալայանի (2009, 2010), Ա.Գ.Մանուկյանի (2009),

Գ.Լ.Դանիելյանի (2008), Կ.Ս.Մխիթարյանի (2013), Ն.Ս.Հայրապետյանի (2009) աշխատանքները:

Իրավաբանական անհամարժեք բառապաշարի ուսուցմանը կարող են նպաստել այն լեզվաբանական հետազոտությունները, որոնք նվիրված են իրավաբանական տերմինաբանական բառապաշարի, իրավաբանական հասկացությունների ուսումնասիրությանը՝ մասնավորապես «վիրավորանք» (Г.В.Кусов 2004), խոսքային ազդեցիկ (В.И.Жельвис 1992), հաղորդակցական ճնշում (З.Вендлер 1985, К.М. Шилихина 2000, И.А.Стернин 2003), բարոյական ազդեցություն (В.И. Карасик 2002), հաղորդակցական կոդերս (Е.В.Клюев 1998): Կարևորվում են նաև «պատվի պաշտպանություն», «արժանապատվություն» հասկացություններին նվիրված լեզվաբանական աշխատանքները (Г.В.Кубиц 2007, Г.В.Кусов 2005, А.М.Эрделевский 2006), ինչպես նաև այն աշխատանքները, որոնք նվիրված են «վիրավորանք» (А.А.Зализняк 1999, Н.Д.Голев 2002) և «ինքնահարգանք» հասկացություններին (Зеленова 2003):

Մեծ նշանակություն ունեն սույն հետազոտության համար, անգլերեն վիրավորական բառերի վերլուծությանը (Сперанская 1999, Капленко 2002), կոնֆլիկտային արտահայտություններին (Гридина 1999, Третьякова 1999), հանցագործ մտահղացմանը և նրա մտադրություններին (Орлова 1999, Сыпченко 2000), հաղորդակցական կոնֆլիկտներին, «իրավական հասկացությունների» իմաստային դաշտերին (Третьякова 2000) նվիրված աշխատանքները:

Իրավաբանական անգլերեն ենթալեզվի բառապաշարի ընտրության սկզբունքներն ընտրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն բառային, իմաստային-գուգորդական, դարձվածային-իմաստային դաշտերը, այլև իրավաբանական ոլորտի սպասարկման խոսքային կադապարները ներառող կոնցեպտները: Դրանք են «օրենք», «կարգ ու կանոն», «արդարություն», և այլ գերհասկացությունները:

Իրավաբանական բառապաշարի ուսուցման տեսանկյունից կարևոր փաստ է այն, որ ՀՀ - ի կրթական տարածքում շրջանառվող բուհական դասագրքերը ստեղծված են լեզվաբանական սկզբունքով, այսինքն՝ նվիրված են իրավաբանական տերմինների թարգմանության հմտությունների ձևավորմանը, իսկ ուսումնասիրվող լեզվի և մայրենի լեզվի հանրամշակութային տարբերությունները իրավական բառապաշարի ուսուցման տեսանկյունից ներկայացված չեն (Комаровская 2005, Павлова 2002):

Ակնհայտ է, որ միջմշակութային հաղորդակցական հմտությունների զարգացման հիմնախնդիրը ամենօրյա թեմաներով շփվելու, մասնագիտական մակարդակներում լուծելու համար անհրաժեշտ է հաշվի առնել անգլերեն իրավական ենթալեզվի ուսուցման մանկավարժական պայմանները, օտար լեզուների ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդները, հնարները, ապագա իրավաբանների ճանաչողական, մասնագիտական պահանջմունքները, այն դրական փորձը, որ կուտակվել է վերջին տարիներին զարգացած մեթոդական ավանդույթներ ունեցող երկրներում:

Այդ առումով, սույն հետազոտությունը արդիական է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊՍՏԱԿՆ Է ստեղծել անգլերեն իրավաբանական ենթալեզվի ուսուցման արդյունավետ կադապար և մշակել մասնագիտական մակարդակում ապագա իրավաբանների միջմշակութային և հաղորդակցական իրազեկությունը զարգացնող մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման համակարգն է մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացումն է անգլերեն իրավաբանական ենթալեզվի ուսուցման գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

🚦 Ուսումնասիրել անգլերեն իրավաբանական ենթալեզվի, բառապաշարի, տերմինների և կարգերի, իրավաբանական հասկացությունների և հասկացությունների ուսուցմանը վերաբերող լեզվաբանական, լեզվամշակութաբանական, լեզվադիդակտիկական և մեթոդական գրականություն:

🚦 Համակարգել օտարալեզու մասնագիտական կողմնորոշման բառապաշարի, իրավաբանական տեքստերի ընտրության սկզբունքները և հստակեցնել իրավաբանական եզրույթների, իրականությունների, հասկացությունների յուրացմանը միտված մեթոդական համակարգը:

🚦 Բացահայտել անգլերեն իրավաբանական ենթալեզվի ուսուցման առանձնահատկությունները հաղորդակցական և միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման տեսանկյունից:

✚ Մշակել միջմշակութային հաղորդակցման հմտություններն անգլերեն իրավաբանական ենթալեզվի ուսուցման գործընթացում շարունակական զարգացնող մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ

✚ Միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացումն անգլերենի իրավաբանական կողմնորոշման դասընթացում ենթադրում է կիրառել համալիր մոտեցում, հաշվի առնել իրավաբանական և մեթոդական ուղղվածության գիտությունների և առարկաների զարգացման արդի միտումները, ինչպես նաև միջմշակութային հաղորդակցության առանձնահատկությունները, ՀՀ-ի կրթական իրողությունները:

✚ Կիրառելով ընթերցանության, խոսքային կարողությունների զարգացման, ուսանողների լսարանային և ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ավանդական և այլընտրանքային տեխնոլոգիաներ և ռազմավարություններ, հնարավոր կլինի ստեղծել միջմշակութային հաղորդակցման կարևոր և անհրաժեշտ պայման հանդիսացող իրավաբանական անգլերեն բառապաշարի ուսուցման արդյունավետ կադապար, որի հիման վրա կմշակվի :

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Մշակվել է անգլերեն իրավաբանական ենթալեզվի ուսուցման գործընթացում միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման մեթոդական համակարգ, որի հիմքում ընկած են հաղորդակցական մոտեցման, անգլերենը հատուկ նպատակներով, միջմշակութային իրազեկության զարգացման սկզբունքները:

Անգլերենի իրավաբանական ենթալեզվի ուսուցումը դիտարկվել է իրավաբանական ուսումնական տեքստերի, իրավաբանական, երկխոսական բնագրերի, եզրույթների, համարժեք և անհամարժեք բառապաշարի ընտրության, դրանց համամասնության պահպանման, լսարանային և ինքնուրույն - արտալսարանային աշխատանքի հարաբերակցության շարունակական ճշգրտման տեսանկյունից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ են հանդիսացել.

- իրավաբանական հասկացությունների ուսումնասիրության (Г.В.Кусов, В.И. Жельвис, Вендлер, К.М.Шилихина, И.А.Стернин, Е.В.Клюев և այլք),

- հատուկ նպատակներով անգլերենի դասավանդման մեթոդիկայի (ESP) (Օ.Գ. Поляков, R.Bolitho, T.Dudley-Evans, T.Hutchinson, C.Kennedy, P.Master, J.Munby, A.Waters, W.M.Rivers և այլք),

- իրավաբանական անգլերեն ենթալեզվի դասավանդման մեթոդիկայի (Ж.Г.Аванесян, А.Я.Зеликман, Г.П.Савченко, И.Г.Федотова, Г.П.Толстопятенко, С.П.Хижняк, D.Z.Kielar, J.Nikkila, D.Riley և այլք),

- միջմշակութային հաղորդակցման հմտությունների, տեքստերի և խոսույթների ընտրության (М.М.Бахтин, Тер-С.Г.Минасова և այլք) սկզբունքները և մոտեցումները:

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են հետևյալ **մեթոդները**.

- հետազոտության թեմային վերաբերող մանկավարժական, լեզվադիդակտիկական, մեթոդական գրականության ընտրություն, ուսումնասիրություն և վերլուծություն,

- իրավաբանական ֆակուլտետի դասախոսների և ուսանողների հարցում, անկետավորում, դիտում, թեստավորում,

- իրավաբանական բնագրերի և իրական իրադրությունների խոսութային վերլուծություն,

- մանկավարժական գիտափորձ, դրա արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության փորձարարական բազա է հանդիսացել ԵՊՀ - իրավաբանական ֆակուլտետը և Հայ-Ռուսական/Մլավոնական/ համալսարանի հումանիտար ինստիտուտը:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Ուսումնական և բնագրային տեքստերի ընթերցանությունը եղել և մնում է արդյունավետ միջոց միջմշակութային հաղորդակցական հմտությունների զարգացման գործընթացում: Դրանք ընտրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել լեզվակիր իրավաբանների հաղորդակցման գիտական, նեղ մասնագիտական և ամենօրյա թեմաներով շփվելու ոլորտները: Դրանք կարող են ներառել անգլալեզու իրավաբանների կյանքին և կենսագործունեությանը, նրանց մասնագիտական նվաճումներին վերաբերող բնագրեր:

2. Հասկացութային մոտեցման տեսանկյունից առաջադրվում է այն դրույթը, ըստ որի՝ իրավաբանական ֆակուլտետում անգլերենի ուսուցումը ենթադրում է պատրաստել

ուսանողներին հաղորդակցվելու նախ և առաջ երկու իրավական իմաստային դաշտերի, մշակույթների մակարդակում: Ընդ որում՝ մշակույթը դիտարկվում է ընդհանուր և նեղ մասնագիտական մակարդակներում: Այն ուսուցանվում է մասնագիտական գիտելիքների, ամենօրյա թեմաներով շփվելու, երկու տարբեր մշակույթների երկխոսություն ապահովելու մակարդակներում:

3. Իրավաբանական բնույթի իրականությունները անհրաժեշտ է ուսուցանել՝ կիրառելով տարբեր մեթոդներ և հնարներ, հաշվի առնելով անգլո-ամերիկյան իրավական ոլորտի, իրավունքի պատմությանը վերաբերող դասընթացները: Առանց դրանց հետևողական ուսումնասիրության և յուրացման հնարավոր չէ հաղթահարել փոխներթափանցման դրսևորումները բառի, քերականության, հնչյունաբանության, մշակույթի և խոսույթի մակարդակներում:

4. Մշակութային և խոսութային փոխներթափանցման հաղթահարման մակարդակում միայն հնարավոր է ձևավորել և զարգացնել միջմշակութային հաղորդակցական հմտություններ անգլերեն իրավական ենթալեզվի ուսուցման գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Ուսումնասիրվել և համակարգվել են անգլերեն իրավաբանական ենթալեզվի ուսուցման գործընթացում միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման հիմնական տեսությունները, մոտեցումները, հայեցակարգերը, հստակեցվել են մասնագիտական կողմնորոշման անգլերեն բառապաշարի ուսուցման նպատակն ու խնդիրները, որտեղ իրավաբանական բառապաշարը ներկայացված է տարբեր ոճերում՝ խոսակցական, համագիտական, նեղ մասնագիտական, ստեղծվել է միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման կաղապար, որն ընկած է առաջարկվող մեթոդական համակարգի հիմքում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. մշակվել է առաջադրանքների և վարժությունների համակարգ, բնագրերի և իրական իրադրությունների միջոցով տարբեր բառային միավորների ուսուցման և յուրացման, ուսանողների վերջնական կարողունակությունների գնահատման չափանիշներ, որոնք կարող են նպաստել իրավաբանական կողմնորոշման անգլերենի ուսուցմանը, շրջանառվող օտարալեզու իրավաբանական անգլերենի դասագրքերի արդյունավետ ստեղծմանը և կիրառմանը, նոր դասընթացների և դասերի պլանավորմանն ու իրականացմանը:

Գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2011 - 2012 թթ.) ձևակերպվել է հետազոտության թեման, հստակեցվել է դրա հիմնախնդիրը, համակարգվել է թեմային վերաբերող գրականությունը, հստակեցվել է հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, առաջադրվել է հետազոտության վարկածը և ճշգրտվել են խնդիրները:

Երկրորդ փուլում (2012 – 2013 թթ.) ստեղծվել է ուսանող-իրավաբանների միջմշակութային կոմպետենցիայի ձևավորման և կիրառման կադապարը, դասակարգվել և համակարգվել են միջմշակութային կոմպետենցիայի ձևավորման տեսանկյունից անգլալեզու իրավաբանական բնագրերի և բառապաշարի ընտրության և ուսուցման սկզբունքները, հստակեցվել են փորձարարական ուսուցման ընթացակարգերը:

Երրորդ փուլում (2013 - 2014 թթ.) ամփոփվել և ներկայացվել են փորձարարական ուսուցման արդյունքները:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովվում է ժամանակակից հումանիտար գիտությունների, մասնավորապես լեզվադիդակտիկայի, օտար լեզուների դասավանդման ոլորտներում ձևավորված առաջավոր տեսությունների համապարփակ վերլուծությամբ, հետազոտության մեթոդաբանական հիմքի և մեթոդական համակարգի օրգանական կապի ապահովմամբ, հետազոտական և ուսուցման մեթոդների կիրառմամբ, փորձարարական ուսուցման արդյունքների արժանահավատությամբ և մշակված մեթոդական համակարգի կիրառման արդյունավետությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ իրականացվել է ԵՊՀ-ի մանկավարժության, անգլիական բնաստիության, անգլերենի թիվ 1 ամբիոնների համատեղ սեմինարներում, հրատարակված աշխատություններում, փորձարարական ուսուցման բազա հանդիսացող իրավաբանական ֆակուլտետներում:

Հետազոտության արդյունքները ներդրվել են ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետում, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում:

Տպագրված աշխատանքները: Ատենախոսության թեմայով տպագրված են 5 գիտական աշխատություն:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը կազմում է 145 համակարգչային էջ:

Աշխատանքի ներածական մասում հիմնավորել ենք հետազոտության արդիակա-
նությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, հետազոտության
վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնա-
դրույթները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին «Ուսանողների միջմշակութային հաղորդակցման կարողությունների և
հմտությունների զարգացման տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլուխը
բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին «Իրավաբան ուսանողների միջմշակութային հաղորդակցման
կարողությունների և հմտությունների ձևավորման տեսական և մեթոդաբանական
հիմքերը» ենթագլխում ներկայացվում են միջմշակութային հաղորդակցության
ուսուցման բովանդակությունը, վերլուծվում է «մշակույթ», (իրավաբան, իրավագետ,
դատախազ, դատավոր, փաստաբան) և հաճախորդ (հայցվոր, մեղադրյալ), մասնագետ -
մասնագետ, հայցվոր - հայցվոր շփման բովանդակությունը միջմշակութային հա-
ղորդակցության տեսանկյունից:

Խնդիր է դրվում ներկայացնել միջմշակութային հաղորդակցման առանձնա-
հատկությունները միջանձնային, մասնագիտական հաղորդակցման տեսանկյունից:
Կարևորվում է նաև հուզական ոլորտը հաշվի առնելով, հուզագրայական բառապաշա-
րի ընտրության և ուսուցման մեթոդիկայի մշակման հիմնախնդիրը:

Երկրորդ «Միջմշակութային հաղորդակցության ուսուցման հիմնական
գործառույթները» ենթագլխում ներկայացվում է հռոմեական, անգլո-սաքսոնական
իրավունքների պատմությունը, դրանց տարբերությունները: Այդ համատեքստում
առանձնացվում են իրավական հաղորդակցության դաստիարակչական, տեղեկատ-
վական, Էթնոհասարակական գործառույթները:

Համեմատական կտրվածքով ներկայացվում են ընդհանուր իրավունքը՝ Մեծ
Բրիտանիա և ԱՄՆ (common law), և քաղաքացիական իրավունքը կամ հռոմեական,
գերմանո-ռուսական, ռուս-հայկական (civil law) իրավական մշակույթները:

Երրորդ «Իրավական անգլերեն ենթալեզվի ուսուցումը դետեկտիվ գրականության
ընթերցանության միջոցով» ենթագլխում նշվում է, որ իրավական անգլերենը բնու-
թագրվում է բարդ բառապաշարով, երկար նախադասություններով, բազում պարա-

գայական նախադասություններով, վերացական գաղափարներով, փաստաթղթերի բովանդակության խրթին ձևակերպմամբ:

Ուսուցման նախնական շրջանում առաջարկվում է ուսանողներին ծանոթացնել դետեկտիվ գրականության պատմությանը, համեմատել անգլիական և հայ գրականության շրջանակներում ձևավորված տվյալ ժանրի զարգացման միտումները, ծանոթանալ հին և նոր դետեկտիվ, քրեական գրական ժանրերին, տարբերակել իրավական եզրույթները և իրակությունները:

Երկրորդ «Ուսանողների միջմշակութային հաղորդակցության կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանների արդյունավետության փորձարարական ստուգումը» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին **«Իրավաբանական տեքստերի հետ աշխատանքը որպես ուսանողների միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման միջոց»** ենթագլուխը ներկայացնում է անգլո-ամերիկյան դատաիրավական հարացույցի շրջանակներում ձևավորված հասկացությունները, այն դժվարությունները, որոնք բացահայտվում են հայրենական և անգլո-ամերիկյան դատաիրավական և մասնագիտական ենթալեզուների համեմատության շնորհիվ:

Համապատասխան վերլուծությամբ ցույց է տրվում, որ իրավաբանական խոսույթը ներառում է իրավունքի հասկացությունների լայն սպեկտր՝ ապացույց, արժանապատվություն, ճշմարտություն, հայցադիմում, մեղք, օրենք, զրպարտանք, իրավունք, արդարադատություն, արժանապատվություն, վկա, դատ, պատիվ, դատավճիռ և այլն:

Երկրորդ **«Իրավաբանական կողմնորոշման բառապաշարի ընտրության և ուսուցման հիմնախնդիրը անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում»** ենթագլխում խնդիր է դրվում անգլերեն իրավական, իրավաբանական կամ իրավունքի ենթալեզուն ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից՝ իմաստաբանական, գործաբանական, նշանաբանական, ճանաչողական և այլն:

Իրավական բառապաշարի թարգմանության տեսանկյունից առանձնանում են երկույթները (doublet) և եռույթները (triplet), ինչպես նաև իրավաբանական հատկանվանական իրույթները, քանի որ դրանք կարելի է ներմուծել թե՛ առանձին նկարագրական մակարդակում, թե՛ համապատասխան տեքստերի միջոցով, երբ դրանց

յուրացումն իրականացվում է որևէ առաջադրանքի կատարման արդյունքում կամ ընթացքում:

Իրավաբանական իրակությունների ուսուցումը կարևորվում է նաև թե՛ դիդակտիկական՝ ընդհանրապես, թե՛ մեթոդական՝ մասնավորապես միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման տեսանկյունից: Բացահայտվում են իրավաբանական իրակությունների թարգմանության դժվարությունները, առ այն, որ շատ իրավաբանական տերմինների և իրույթների բացատրությունն անգլերեն - հայերեն կամ անգլերեն - ռուսերեն բառարաններում ամբողջական տրված չէ:

Վերլուծված են ՀՀ - ի կրթական տարածքում շրջանառվող բուհական դասագրքերը, որոնք ստեղծված են լեզվաբանական սկզբունքով: Նշվում է, որ դրանք միտված են իրավաբանական տերմինների թարգմանության հմտությունների ձևավորմանը, իսկ ուսումնասիրվող լեզվի և մայրենի լեզվի հանրամշակութային տարբերությունները իրավական բառապաշարի ուսուցման տեսանկյունից ներկայացված չեն:

Երրորդ **«Ուսանողների միջմշակութային հաղորդակցական կարողությունների ձևավորման կադապարը»** ենթազխում հանգամանորեն ներկայացվում են նշված կադապարի բաղադրիչները մեթոդաբանական և մեթոդական մակարդակներում:

Առանձնացվում են ընկալողական, ընկալողական - արտադրողական բնույթի վարժությունները, որոնք միտված են ձևավորել ուսանողների դատաքննություն անցկացնելու, բանավիճելու կարողություններ անգլերեն լեզվով:

Իրավաբանական տեքստերի ընթերցանությունն ուսուցման միջին և ավարտական փուլերում ենթադրում է կիրառել պրոբլեմային - վերլուծական առաջադրանքներ, քանի որ իրավաբանները պետք է կարողանան բացահայտել ոչ միայն թեման, այլև ռեման :

Գիտափորձի նախնական փուլում վերլուծվել է ԵՊՀ - իրավաբանական ֆակուլտետում բակալավրիատում ուսումնասիրվող իրավաբանների համար նախատեսված («Just English. Английский для юристов») դասագիրքը: Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, որոշ տեքստեր և վարժություններ կարևոր են և՛ մասնագիտական, և՛ միջմշակութային հաղորդակցության տեսանկյունից:

Ըստ այդմ, փորձարարական խմբերում, մեր կողմից առաջարկվում է ռուսերենից անգլերեն թարգմանելու պահանջ պարունակող առաջադրանքները նախօրոք թարգմանել:

Վերլուծված է նաև իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայում ուսումնասիրվող անգլերեն («Lee, D.S., Hall, C., & Barone, S. (2007). *American Legal English: Using Language in Legal Contexts*. 2nd ed. Ann Arbor: University of Michigan Press») դասագիրքը:

Ընդհանուր առմամբ, վերլուծված դասագրքում կիրառվել են ինչպես ընկալողական, այնպես էլ ընկալողական-արտադրողական վարժություններ: Փորձարարական աշխատանքին մասնակցել են 94 ուսանող: Ուսանողների միջմշակութային իրազեկության կարողությունների մակարդակը պարզելու համար կազմվել է անկետա:

Երկրորդ փուլում իրականացվել է ձևավորող գիտափորձ: Փորձարկվել է անգլերեն իրավական ենթալեզվի միջոցով միջմշակութային հաղորդակցության կարողությունների ձևավորման կադրային: Այդ նպատակով ընտրվել են մասնագիտական և գեղարվեստական տեքստեր, մշակվել է համապատասխան վարժությունների համակարգ: Ձևավորող գիտափորձն անցկացվել է ընտրված ստուգողական և փորձարարական խմբերի հիման վրա:

Ապագա իրավաբանների անգլերեն ուսումնասիրելու հիմնական նպատակն է հասնել այնպիսի մակարդակի, որ կարողանան մասնակցել միջմշակութային հաղորդակցությանը մասնագիտական գործունեության ակադեմիական միջավայրում:

Արդյունավետ է նախագծային, հետազոտական, ստեղծագործական, խաղային, տեղեկատվական աշխատանքի կազմակերպումը:

Ձևավորող գիտափորձի ընթացքում մեծ տեղ է գրավում քեյս /case/ կամ դեպքի վերլուծությունը, երբ մոդելավորվում են փաստագրված, իրական իրադրություններ, որոնց բնորոշ դեպքերը հիմք են ծառայում քննարկումների համար:

Փորձարարական աշխատանքի ձևավորող փուլում արդյունավետորեն կիրառվել են գործարարական և խաղային մեթոդներ:

Ուսանողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները գնահատվում են 20 բալանոց համակարգով: Փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքները համեմատվում են փորձարարական ուսուցման սկզբում և վերջում:

Փորձարարական և ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների ամփոփիչ աղյուսակ

Առաջարկվող հարցեր	Փորձարարական խումբ		Ստուգողական խումբ	
	N – 48		N – 46	
	Մինչև փորձը	Փորձից հետո	Մինչև փորձը	Փորձից հետո
1. ճանաչել անգլալեզու իրավական եզրույթները	10	16	10	13
2. ճանաչել անգլալեզու իրավական իրակությունները	9	16	10	14
3. կիրառել դրանք տարբեր իրական համարվող իրադրություններում	10	16	11	14
4. հասկանալ և գործածել հարալեզվական միջոցները	9	15	10	13
5. համեմատել և գործածել իրավական ոլորտում կիրառվող «մարմնի լեզուն»	9	16	10	13
6. կիրառել գրավոր և բանավոր խոսքում կապակցական բառերը և արտահայտությունները	10	16	10	13
7. համեմատել իրավական իրողությունները, գործերը, դեպքերը, իրակություններն ըստ մշակութային ենթատեքստի	9	15	10	12
8. մեկնաբանել դատաիրավական նախադեպերը ըստ մշակութային ենթատեքստի	8	15	9	12
9. վերլուծել գեղարվեստական, դետեկտիվ տեքստերը ըստ իրավական մշակույթի ենթատեքստի	7	14	8	11
10. վերլուծել գեղարվեստական ֆիլմերը ըստ իրավական մշակույթի ենթատեքստի	11	17	12	15

Ըստ այդմ, փորձարարական խմբի ուսանողները փորձարարական աշխատանքի սկզբում նույն մակարդակում են ճանաչում անգլալեզու իրավական եզրույթները, սակայն գիտափորձի վերջում նրանք գերազանցում են ստուգողական խմբի ուսանողներին 3 միավորով:

Ընդհանուր արդյունքների համեմատությունը, որն իրականացվել է Microsoft Excel 2010 ծրագրով, ցույց է տալիս, որ փորձարարական խումբն առաջադիմել է 24 %, իսկ ստուգողական խումբը՝ 14 %: Գիտափորձի տվյալների հավաստիությունը և հուսալիությունը հաստատվում է ստացված արդյունքների համեմատությամբ և ամփոփմամբ: Տվյալների մշակումն իրականացվել է նշված ծրագրով:

Աղյուսակ 2.

Փորձարարական և ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների ամփոփիչ աղյուսակ

Կարողություններ	Փորձարարական խումբ		Ստուգողական խումբ	
	N - 48		N - 46	
	Մինչև փորձը	Փորձից հետո	Մինչև փորձը	Փորձից հետո
1. ընտրված հաղորդակցական ոճի ընտրության	10	16	10	13
2. վերլուծվող իրավական հասկացույթի մեկնաբանման	9	16	10	14
3. խոսքային վարվեցողության կանոնների կիրառման	10	16	11	14
4. հաղորդակցման ռազմավարության ընտրության	9	15	10	13
5. տարբեր իրավական թեմաներով բանավիճելու	9	16	10	13
6. իրավական ենթամշակույթների համեմատության	10	16	10	13
7. խոսքարկող հաղորդակցության	9	15	10	12
8. խոսքի մեջ ոճական հնարների կիրառման	8	15	9	12
9. անգլերեն իրավական ենթալեզվով դեպքերի ուսումնասիրության	7	14	8	11
10. խոսութային վերլուծության	11	17	12	15

Մշակված չափանիշների գնահատումը ցույց տվեց, որ նշված կարողությունները կարող են ձևավորվել և զարգանալ այն դեպքում, երբ թե՛ դասագրքերի, ուսումնական ձեռնարկների հեղինակները, թե՛ դասավանդող դասախոսները տիրապետեն որոշակի մեթոդական զինանոցի, քանի որ միայն շրջանառվող դասագրքերով աշխատանքը չի կարող տալ ցանկալի արդյունք:

Այսպիսով, փորձարարական և ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների համեմատությունը հաստատում է առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը: Փորձարարական խմբում ուսանողների առաջադիմությունը կազմում է 34 %, իսկ ստուգողական խմբում՝ 14 %:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Անզլերեն իրավաբանական ենթալեզվի յուրացումը բառապաշարի ուսուցման տարբեր մակարդակներում նպաստում է ուսանողների հաղորդակցական հմտությունների ձեռք բերմանը, եթե առաջին պլան է մղվում իրավաբանական եզրույթների, իրակությունների, կարգերի ուսուցման հասկացութային մոտեցումը:

2. Ապագա իրավաբանները պետք է շփման տարբեր մակարդակներում յուրացնեն անզլալեզու իրավաբանների, իրավագետների խոսքային վարքագիծը, վարքագծային կարծրատիպերը, մասնագիտական ոլորտում գործածվող լեզվակադապարները, ընդհանուր առմամբ՝ նրանց իրավական մշակույթի հիմնական բաղադրիչները, քանի որ հնարավոր չէ իրականացնել միջմշակութային հաղորդակցություն միայն մասնագիտական կամ գիտական մակարդակներում:

3. Մի կողմից՝ արկածային-քրեական ուղղվածության գրականությունը, կինոարդյունաբերությունը հնարավորինս ճիշտ արտացոլում են իրավական ոլորտում շրջանառվող բառապաշարի առանձնահատկությունները: Մյուս կողմից՝ իրավական խոսույթի հետ ուսուցողական նպատակներով աշխատանքը, կամա, թե ակամա հաշվի է առնում դետեկտիվ գրականության և կինոարվեստի զարգացումները:

4. Անզլերեն իրավաբանական իրակությունների ուսուցումը նպաստում է ապագա իրավաբանների բուն մասնագիտական գիտելիքների խորացմանը: Միջմշակութային բնույթի փոխներթափանցումը հնարավոր է հաղթահարել, երբ ուսանողները ուսումնասիրում և յուրացնում են ոչ միայն անզլալեզու մարդկանց ազգամշակութային

կարծրատիպերը, լակունաները, այլև անգլալեզու իրավաբանների խոսքային վարքագիծը մասնագիտական մակարդակում:

5. Առաջարկվող անգլերեն իրավական ենթալեզվի միջոցով միջմշակութային հաղորդակցության ուսուցման կադապարը ենթադրում է բացահայտել անգլալեզու իրավաբանների խոսքային, ոչ խոսքային, վարքագծային, հանրամշակութային, մասնագիտական առանձնահատկությունները առօրյա շփման և մասնագիտական մակարդակներում:

6. Փորձարարական աշխատանքի արդյունքները հաստատում են այն մտահանգումը, ըստ որի՝ իրավական անգլերենի դասընթացները կազմակերպելիս, դասախոսները համապատասխան ուշադրություն չեն դարձնում միջմշակութային հաղորդակցության հմտությունների զարգացման վրա, հաշվի չեն առնում այն փաստը, որ հայալեզու ուսանողները հաղթահարում են մշակութային փոխներթափանցումն ընդհանրապես, և տվյալ մասնագիտական շփման մակարդակում՝ մասնավորապես:

7. Անգլերեն իրավական ենթալեզվի ուսուցման գործընթացում միջմշակութային հաղորդակցության հիմնական բաղադրիչների յուրացման կարևոր պայման է իրավական խոսույթների, տրամախոսական դաշտերի փոխներթափանցման հիմնախնդրի մեթոդական մակարդակում ուսումնասիրությունը և լուծումը, քանի որ ցանկացած մասնագիտական կողմնորոշման լեզվի ուսուցում ենթադրում է խոսութային փոխներթափանցման հաղթահարման ռազմավարությունների ուսուցում:

Ատենախոսության **հիմնական դրույթներն** արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Ա. Ա. Ոսկանյան, Միջմշակութային հաղորդակցության ուսուցման մեթոդական համակարգը անգլերեն իրավական կողմնորոշման դասընթացում: Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, 6, 2015, էջ՝ 64-72

2. Ա. Ա. Ոսկանյան, Մ. Մ. Նազարյան, Իրավական անգլերեն ենթալեզվի ուսուցումը դետեկտիվ գրականության միջոցով: Մանկավարժական միտք, 1-2, Զանգակ հրատարակչություն, Երևան, 2014թ., էջ՝ 217-225

3. Ա. Ա. Ոսկանյան, Իրավաբան ուսանողների միջմշակութային հաղորդակցման կարողությունների ձևավորման հիմնախնդիրը: Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, 5, Երևան, 2013, էջ՝ 33-45
4. Ա. Ա. Ոսկանյան, Անգլերեն իրավաբանական տեքստերի հետ աշխատանքը՝ որպես ուսանողների միջմշակութային հաղորդակցական կարողությունների զարգացման միջոց: FLSP, 1(10), Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2013, էջ՝ 224-232
5. Ա. Ա. Ոսկանյան, Անգլերեն իրավաբանական բառապաշարի ընտրության և ուսուցման հիմնախնդիրը: Կրթությունը և զիտությունը Արցախում, 1-2, 2012, էջ՝ 126-131

Восканян Анаит Агвановна

Развитие навыков межкультурной коммуникации в профессионально-ориентированном курсе английского языка

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - “Методика преподавания и воспитания” (английский язык)”.

Защита диссертации состоится 26-го июня 2015 г. в 14⁰⁰ на заседании специализированного совета 065 ВАК по присуждению ученых степеней при Ереванском государственном университете, адрес: 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52 а. ЕГУ, факультет армянской филологии, 203 аудитория.

РЕЗЮМЕ

В диссертационном исследовании рассматриваются актуальные проблемы формирования межкультурной компетенции в юридически-ориентированном курсе английского языка.

Актуальность исследования. Реформы, осуществляемые в правовой сфере любой страны, имеют огромное значение для развития образования, экономики, индустрии, культуры и т.д.

Студенты, у которых первый или родной язык является армянский, очень часто не в состоянии общаться с англоязычными коллегами в должной мере, особенно на профессиональном уровне.

Решение на общенаучном, обыденном, профессиональном уровнях проблемы формирования межкультурных коммуникативных навыков требует учесть педагогические условия обучения английскому правовому подязыку, современные технологии, методы, приемы обучения иностранным языкам, когнитивные и профессиональные потребности будущих юристов, а также тот позитивный опыт, который накоплен за последние годы в странах, имеющих богатые методические традиции.

Целью исследования является создание эффективной модели обучения английскому юридическому подязыку и разработка методической системы развития межкультурной и коммуникативной компетенции у будущих юристов на профессиональном уровне.

Задачи исследования:

- ✚ Изучить лингвистическую, лингвокультурологическую, лингводидактическую и методическую литературу по вопросам обучения юридическому подязыку, лексике, понятиям и концептам.
- ✚ Систематизировать иноязычную юридически-ориентированную лексику, принципы отбора юридических текстов, создать методическую систему усвоения юридических терминов, реалий и концептов.
- ✚ Выявить особенности обучения английскому юридическому подязыку с точки зрения развития межкультурных и коммуникативных умений и навыков.
- ✚ Разработать методическую систему развития межкультурных и коммуникативных умений и навыков в процессе последовательному обучению иноязычному юридически-ориентированному подязыку.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, 2 глав, заключения, библиографии и приложений.

Научная новизна исследования. Разработана методическая система развития межкультурных и коммуникативных умений и навыков в процессе обучения иноязычную юридически-ориентированную подязыку, в основе которой лежат принципы развития коммуникативного подхода, английского для специальных целей (ESP), межкультурной компетенции.

Разработанная система отбора лексики и упражнений включает как традиционные, так и современные, а также альтернативные методы и процедуры.

Теоретическое значение исследования:

- Изучены и систематизированы основные теории, подходы и концепции по обучению английскому юридическому подязыку в процессе развития межкультурной компетенции.
- Уточнены цель и задачи обучения иноязычному юридически-ориентированному подязыку, где юридическая лексика представлена в разных стилях: разговорной, общенаучной, узко профессиональной.
- Создана модель развития навыков и умений развития межкультурной коммуникации, которая лежит в основе предложенной методической системы.

Практическое значение исследования.

Разработана система задач и упражнений работы с аутентичными текстами (дискурсами), моделирования аутентичных ситуаций, критерии оценки умений и навыков студентов. Предложенная методическая система может способствовать практическому обучению юридически-ориентированному английскому языку, эффективному применению действующих учебников, предназначенных для обучения английскому языку на юридическом факультете, составлению и созданию новых учебников и учебно-методических комплектов, а также организации профессионально-ориентированных курсов обучения английскому языку.

Апробация результатов исследования.

Основные результаты проведенного исследования были обсуждены на заседаниях кафедр педагогики, английской филологии, кафедры английского языка 1 в ЕГУ , в процессе публикации статей по теме диссертации, и на тех факультетах, где осуществлялось экспериментальное обучение.

Результаты исследования были внедрены в опытном обучении на юридических факультетах ЕГУ и РАУ.

По теме диссертации опубликованы пять научных статей.

Voskanyan Anahit Aghvan

The Development of Intercultural Communication Skills in ESP Course

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 - "Methods of teaching and education" (English language).

SUMMARY

This thesis targets at the vital issues of the formation of intercultural competence in the legally-oriented English course.

The relevance of the study. The reforms carried out in the legal sphere of any country are of great importance to develop education, economy, industry, culture, etc.

Nonnative law students whose first or native language is Armenian often find difficulty in communicating with their native English-speaking colleagues on legal topics.

The solution of the problems of promoting intercultural communication skills on the general scientific, colloquial, professional levels requires to take into account pedagogical conditions of learning English legal sublanguage, modern technologies, techniques, methods of teaching foreign languages, cognitive and professional needs of future lawyers, as well as the positive experience gained in recent years in countries with abundant methodological traditions.

The aim of the study is to create an effective model of teaching English legal sublanguage and develop methodological system focused on the promotion of future lawyers' intercultural and communicative competence in a professional target setting.

Research Objectives:

- Explore linguistic, lingvoculturalogical, lingvodidactic and methodological literature on training legal sublanguage, vocabulary, concepts and notions.
- Systematize foreign language legally-oriented vocabulary, principles of selecting legal texts as well as create a methodological system of acquiring legal terms, concepts and realias.
- Identify the features of teaching English legal sublanguage in terms of intercultural and communicative skills.
- Elaborate a constantly developing methodological system of formulating intercultural and communicative skills in legal English course.

The content of research is reflected in the structure of the thesis, which consists of an introduction, two chapters, conclusions, bibliography and appendices.

Scientific novelty of the research.

The research develops the methodological system of forming intercultural and communicative skills in the process of teaching legally-oriented sublanguage based on the principles of the communicative approach, ESP, and intercultural competence.

The developed system of selecting vocabulary and exercises includes both traditional and modern, as well as alternative methods and procedures.

The theoretical value of the research.

The research studies and systematizes the basic theories, concepts and approaches for teaching legal English in the process of developing intercultural competence; clarifies the purpose and objectives of legally-oriented sublanguage of teaching where legal vocabulary is presented in different styles: colloquial, general scientific, professional, as well as develops the model of forming intercultural communication skills which is the basis of the proposed methodological system.

The practical significance of the research

It develops the system of tasks and exercises with authentic texts (discourse), simulation of authentic situations, the criteria of assessing students' intercultural communicative skills in occupational settings. The developed methodological system can contribute to successful teaching of legal English and effective application of current textbooks and study materials circulated at Law Departments. Moreover, it highlights the drafting and creating new textbooks and teaching kits, as well as the designing and implementing new legal English courses.

The approbation of the research.

The main results of the study were discussed at the joint session of the chairs of Pedagogy, English Philology, English Language No. 1 in YSU, as well as in the published articles on the theme of the dissertation and at the Departments where the pilot training was carried out.

The study was implemented through the pilot training at the Law Departments of YSU and RAU.

Five scientific articles have been published covering the topic of the dissertation.